

Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի 2006թ.

սեպտեմբերի 30-ի թիվ 1 նիստում

Ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան

«30» սեպտեմբերի 2006թ.



## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ԿԱՐԻՉԻ

## ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

1. Սույն ընթացակարգով սահմանվում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ամբիոնների վարիչների ընտրության, աշխատանքային պայմանագրի կնքման և պաշտոնում հրամանագրման կարգը:
2. Ամբիոնը ԳՊՀ կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումն է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթաց, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքներ, բարձրագույն կրթությամբ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստման, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացներ:
3. Ամբիոնի իրավասությունները և գործունեության սկզբունքները սահմանվում են ԳՊՀ և ֆակուլտետի կանոնադրություններով և ամբիոնների կանոնակարգով:
4. Ամբիոնների գործունեությունը վերահսկվում է ԳՊՀ ռեկտորի, պրոռեկտորների, դեկանի կողմից:
5. Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը, որն ընտրվում է սույն ընթացակարգի ներկայացրած կարգով՝ 5-ամյա պաշտոնավարման ժամկետով: Ամբիոնի վարիչի հետ ընտրությունների արդյունքի հիման վրա ԳՊՀ գիտխորհրդի ներկայացմամբ աշխատանքային պայմանագիր է կնքում և նրան պաշտոնում հրամանագրում է համալսարանի ռեկտորը: Ամբիոնի վարիչը, որպես կանոն, պետք է լինի գիտությունների դոկտոր (պրոֆեսոր): Նշված պաշտոնը կարող է զբաղեցնել նաև գիտությունների թեկնածու (դոցենտ) կամ ԳՊՀ պրոֆեսոր: Ամբիոնի վարիչը միաժամանակ երկու պաշտոն զբաղեցնել չի կարող:
6. Ամբիոնի վարիչն իրականացնում է հետևյալ գործառնությունները.
  - 1) հաշվետու է ամբիոնին, ֆակուլտետի դեկանին, համալսարանի ռեկտորին, պրոռեկտորներին,
  - 2) ներկայացնում է ամբիոնը համալսարանում և համալսարանից դուրս, մասնակցում է ամբիոնի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը,
  - 3) հրավիրում և վարում է ամբիոնի նիստերը,
  - 4) ի պաշտոնե գիտխորհրդի, ֆակուլտետի խորհրդի անդամ է,

- 5) իրականացնում է ամբիոնի տարեկան ուսումնական բեռնվածքի և ամբիոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկում դրանց կատարման ժամկետներն ու որակը,
- 6) ծրագրում և ղեկավարում է ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքները և առարկայական ծրագրերի կազմումը, մասնակցում է մասնագիտությունների (մասնագիտացումների) ուսումնական պլանների կազմմանը,
- 7) կատարում է ամբիոնի դասախոսների դասալսումներ և կազմակերպում դրանց քննարկում,
- 8) ամբիոնի նիստին է ներկայացնում առաջարկություններ ամբիոնի պրոֆեսորադասախոսական թափուր պաշտոնատեղերի տեղակալման, պաշտոններում առաջաջաման, հատուկ տարակարգեր զբաղեցնելու և աշխատանքային պայմանագրերի կնքման վերաբերյալ,
- 9) ԳՊՀ ռեկտորին, պրոռեկտորին, ֆակուլտետի ղեկանին է ներկայացնում առաջարկություններ ամբիոնի նոր պրոֆեսորադասախոսական պաշտոնատեղերի ստեղծման վերաբերյալ,
- 10) ԳՊՀ ռեկտորին է ներկայացնում ամբիոնի թափուր պաշտոնի մինչև մեկ տարի ժամկետով արտամրցութային կարգով պրոֆեսորադասախոսական կազմի համալրման մասին առաջարկություն:
- 11) կազմում և ԳՊՀ ռեկտորին, պրոռեկտորին, ֆակուլտետի ղեկանին է ներկայացնում պրոֆեսորադասախոսական կազմի հետ աշխատանքային պայմանագրի կնքման նախագծեր,
- 12) ԳՊՀ ռեկտորի (պրոռեկտորի), ֆակուլտետի ղեկանի հաստատման է ներկայացնում ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանը և դրա վերաբերյալ ներկայացնում տարեկան հաշվետվություն,
- 13) կազմակերպում է գիտամանկավարժական կադրերի պատրաստման, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներ: Կազմակերպում է գիտական գործուղումներ:
- 14) իրականացնում է վերահսկողություն և պատասխանատվություն կրում ամբիոնում ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ու որակի, ֆինանսական կարգապահության, ներքին կարգուկանոնի և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման համար,
- 15) իրավասու է նախաձեռնել ամբիոնի աշխատակիցների պարգևատրման և խրախուսման գործընթաց, ինչպես նաև վերադաս մարմինների առջև միջնորդություն է ներկայացնում ամբիոնի աշխատակիցներին կարգապահական տույժերի ենթարկելու համար:

## II. ԱՄՔԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.

16. ԳՊՀ-ում սահմանվում է ամբիոնի վարիչի պաշտոնատեղի զբաղեցման մրցութային եղանակ:
17. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղերի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը ձևակերպվում է համալսարանի ռեկտորի հրամանով, տպագրվում է հանրապետական մամուլում և հայտարարվում է ԳՊՀ-ում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնատեղի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում:
18. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին, որպես կանոն, մասնակցում են գիտությունների դոկտորի (պրոֆեսորի) գիտական աստիճան (կոչում) ունեցող անձինք, իսկ նրանց բացակայության կամ առաջին մրցույթից հետո ամբիոնի վարիչի պաշտոնը թափուր մնալու դեպքում և կրկնակի մրցույթ հայտարարելուց հետո՝ նաև գիտությունների թեկնածուի (դոցենտի) գիտական աստիճան կամ ԳՊՀ պրոֆեսորի կոչում ունեցող անձինք:
19. Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում ԳՊՀ գիտական քարտուղարին են ներկայացնում՝
  - 1) դիմում ռեկտորի անունով,
  - 2) կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
  - 3) քաղվածք աշխատանքային գրքույկից,
  - 4) համառոտ ինքնակենսագրություն,

- 5) գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- 6) տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
- 7) տվյալներ պարզաստրուումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

20. Պաշտոնատեղի հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե նրա որակավորումը չի բավարարում մրցույթի պայմանները կամ էլ չի պահպանվել դիմումի ներկայացման ժամկետը:

21. ԳՊՀ գիտական քարտուղարը 1 շաբաթվա ընթացքում կազմակերպում է հավակնորդների գործերի քննարկումը տվյալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ և գիտական խորհրդին է ներկայացնում ամբիոնի կարծիքը: Կարծիքում նշվում են՝ հավակնորդի մասնագիտական բնութագիրն ու մանկավարժական գործունեության գնահատականը, ամբիոնի նիստի քվեարկության արդյունքները (փակ կամ բաց՝ ըստ ամբիոնի նիստի որոշման), ամբիոնի վարիչի պաշտոնում հավակնորդին նշանակելու պատճառաբանված հիմնավորումը և պայմանագիր կնքման առաջադրվող ժամկետը:

22. Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքով ամբիոնը կարող է հիմնավորված առաջնություն տալ հավակնորդներից մեկին, որից հետո բոլոր գործերը ներկայացվում են գիտական խորհրդին:

23. Ամբիոնի վարիչն ընտրվում է հետևյալ կարգով.  
ԳՊՀ գիտական խորհուրդը քննարկում է ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը և ընդունում որոշում՝ փակ (զաղտնի) քվեարկությամբ: Մրցույթով անցած և առավելագույն ձայներ հավաքած հավակնորդի հետ սահմանված կարգով կնքվում է պայմանագիր:

24. Ամբիոնների միացումից կազմավորված նոր ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը (նոր մրցույթ հայտարարելու կամ ամբիոնների վարիչներից մեկին նշանակելու) որոշում է ԳՊՀ գիտխորհուրդը փակ (զաղտնի) քվեարկությամբ:

25. Ամբիոնների բաժանման դեպքում ամբիոնի վարիչը ԳՊՀ ռեկտորի հրամանով նշանակվում է կազմավորված նոր ամբիոններից մեկի վարիչի պաշտոնում, իսկ մյուս ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար հայտարարվում է մրցույթ՝ համաձայն սույն ընթացակարգի:

26. Պաշտոնավարումը շարունակելու դեպքում ամբիոնի վարիչը պահպանում է իր կարգավիճակը մինչև նախկին մրցույթով (պայմանագրով) սահմանված ժամկետի ավարտը:

27. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայություն, կրկնակի մրցույթի բացասական արդյունք և այլն) ԳՊՀ ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն ընթացակարգի 18-րդ կետի պահանջները բավարարող ԳՊՀ կամ այլ բուհի մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի ընտրության նոր գործընթաց:

### **III. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ**

28. Ամբիոնի վարիչի պաշտոնում մրցույթով անցած անձի հետ 5-ամյա պաշտոնավարման ժամկետում ԳՊՀ գիտխորհրդի ներկայացմամբ ԳՊՀ ռեկտորը 5 տարով կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում ամբիոնի վարիչի պաշտոնում:

29. Ամբիոնի վարիչը միաժամանակ երկու պաշտոն զբաղեցնել չի կարող:

30. Աշխատանքային պայմանագրում նշված պաշտոնավարման ժամկետը լրանալու և նոր պայմանագիր չկնքելու, ինչպես նաև սույն ընթացակարգով հաստատագրված՝ ամբիոնի վարիչի պաշտոնավարման առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ ԳՊՀ ռեկտորը օրենքով սահմանված կարգով, պայմանագրում նշված ժամկետի ավարտից 2 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում է ամբիոնի վարիչին և նշանակում ամբիոնի վարիչի նոր ընտրություններ՝ սույն ընթացակարգով սահմանված կարգով:

31. Աշխատանքային պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վաղակետ լուծվել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ կամ կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ այլ

պատճառներով: Աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ լուծելու որոշման մասին կողմերը միմյանց իրազեկ են պահում 2 ամիս առաջ՝ պարզաբանելով որոշումն ընդունելու պատճառները, որից հետո ԳՊՀ ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի \_\_\_\_\_  
*տարեթիվ, ամսաթիվ*

նիստում (արձանագրություն թիվ \_\_ ) ԳՊՀ \_\_\_\_\_  
*ամբիոնի անվանումը*

ամբիոնի վարիչի փակ (գաղտնի) քվեարկության.

\_\_\_\_\_

*թեկնածուի ազգանուն, անուն*

Կողմ

Դեմ

\_\_\_\_\_

\* Քվեարկության համար վանդակներից մեկում կատարվում է **V** նշագրումը:

## ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

#### ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի \_\_\_\_\_  
*տարեթիվ, ամսաթիվ*

նիստում (արձանագրություն թիվ \_\_ ) ԳՊՀ \_\_\_\_\_  
*ամբիոնի անվանումը*

ամբիոնի վարիչի փակ (զաղտնի) քվեարկության.

1. \_\_\_\_\_  
*թեկնածուի ազգանուն, անուն*

Կողմ

Դեմ

2. \_\_\_\_\_  
*թեկնածուի ազգանուն, անուն*

Կողմ

Դեմ

3. \_\_\_\_\_  
*թեկնածուի ազգանուն, անուն*

Կողմ

Դեմ

4. \_\_\_\_\_  
*թեկնածուի ազգանուն, անուն*

Կողմ

Դեմ

«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ»

\* Քվեարկության համար վանդակներից մեկում կատարվում է **V** նշագրումը:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ \_\_\_\_\_  
հաշվիչ հանձնաժողովի նիստի**

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է ԳՊՀ գիտական խորհրդի «\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_թ. թիվ \_\_\_\_\_ նիստում (արձանագրություն թիվ \_\_\_\_\_) հետևյալ կազմով՝

1. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*
2. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*
3. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*

Գիտական խորհրդի \_\_\_\_\_ անդամներից ներկա էին \_\_\_\_\_ -ը:  
Քվեարկվել է (են) \_\_\_\_\_ անբիռնի վարիչի պաշտոնի  
*անբիռնի անվանումը*

Թեկնածությունը (ները):  
Քվեարկությանը մասնակցել են գիտական խորհրդի \_\_\_\_\_ անդամներ:  
Բաժանվել է \_\_\_\_\_ քվեաթերթիկ:  
Քվեատուփում առկա է \_\_\_\_\_ քվեաթերթիկ:  
Քվեարկության արդյունքներն են՝ Մեկ  
թեկնածուի դեպքում՝

թեկնածուի ազգանունը անունը	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱԿԵՐ

Մեկից ավելի թեկնածությունների դեպքում՝

թեկնածուի ազգանունը անունը	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱԿԵՐ
թեկնածուի ազգանունը անունը			
թեկնածուի ազգանունը անունը			
թեկնածուի ազգանունը անունը			

«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» քվեաթերթիկների քանակը \_\_\_\_\_ :  
Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*

ընտրված է (չի ընտրված) \_\_\_\_\_ անբիռնի վարիչի պաշտոնում:  
*անբիռնի անվանումը*

Կամ՝ Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով \_\_\_\_\_ անբիռնի  
վարիչի  
*անբիռնի անվանումը*

թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում վարիչի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*
2. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:  
Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն, ազգանուն, անուն)

- Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝
1. \_\_\_\_\_ (ստորագրություն, ազգանուն, անուն)
  2. \_\_\_\_\_ (ստորագրություն, ազգանուն, անուն)
  3. \_\_\_\_\_ (ստորագրություն, ազգանուն, անուն)